

3406


Ի. Ս Ա Լ Ի

ՃԱՌ ԱՐՏԱՍԱՆԱԾ
ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ



3 K 33
b - 33

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938



ՊՐՈԼԵՏԱՐԻԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

ՀԿՀՀ
Ճ-33

ՄՐ

Ի. ՍՏԱԼԻՆ

24 JUN 2005
120 NOV 2009

ՃԱՌ՝ ԱՐՏԱՍԱՆԱԾ
ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ

1985 թ. նոյեմբերի 17

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ • 1938

05.08.2013

3406

1. ԱՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հնկերներ: Ստախանովյականների մասին այս-
տեղ, այս խորհրդակցությանը, այնքան շատ և
այնքան լավ խոսեցին, վոր ինձ, խոկապես, քիչ բան
և մնում ասելու: Այնուամենայնիվ, քանի վոր ինձ
ամբիոն կանչեցիք, պետք է միքանի խոսք ասեմ:

Ստախանովյան շարժումը չի կարելի գիտել վոր-
պես բանվորների ու բանվորուհիների սովորական
շարժում: Ստախանովյան շարժումը բանվորների ու
բանվորուհիների մի այնպիսի շարժում է, վորը մեր
սոցիալիստական շինարարության պատմության մեջ
կմտնի վորպես նրա փառավոր եջերից մեկը:

Ինչո՞ւմն է կայանում ստախանովյան շարժման
նշանակությունը:

Ամենից առաջ նրանում վոր նա արտահայտում
է սոցիալիստական մրցության նոր վերելքը, սոցիա-
լիստական մրցության նոր, ավելի բարձր ետապը:
Ինչո՞ւ նոր, ինչո՞ւ ավելի բարձր: Վորովհետեւ նա,
ստախանովյան շարժումը, վորպես սոցիալիստական
մրցության արտահայտություն, նպաստավոր կեր-
պով տարբերվում է սոցիալիստական մրցության հին
ետապից: Անցյալում, մոտ յերեք տարի առաջ, սո-
ցիալիստական մրցության առաջին ետապի շրջա-
նում, սոցիալիստական մրցությունն անպայման չեր
կապված նոր տեխնիկայի հետ: Ասենք՝ այն ժա-
մանակ մեղ մոտ, խոկապես, համարյա չկար եւ նոր



6585-50

И. СТАЛИН

РЕЧЬ НА ПЕРВОМ ВСЕСОЮЗНОМ
СОВЕЩАНИИ СТАХАНОВЦЕВ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938 г.

տեխնիկա: Իսկ սոցիալիստական մրցության ներկա հստապը՝ ստախանովյան շարժումը, ընդհակառակը, անզայման կապված է նոր տեխնիկայի հետ: Ստախանովյան շարժումն աներևակայելի կլիներ առանց նոր, ավելի բարձր տեխնիկայի: Զեր առջե կանգնած են ընկերներ Ստախանովի, Բուսիդինի, Մմետանինի, Կրիվոնոսի, Պրոնինի, Վինոգրառովաների և շատ ուրիշների նման մարդիկ, նոր մարդիկ, բանվորներ ու բանվորուհիներ, վորոնք լիովին տերապետել են իրենց գործի տեխնիկային, թամբել են այն և առաջ են քշել: Մի յերեք տարի առաջ մեզ մոտ այլպիսի մարդիկ չկային, կամ համարյա չկային: Մրանք նոր, առանձնահատուկ մարդիկ են:

Այսուհետև: Ստախանովյան շարժումը բանվորների ու բանվորուհիների մի այնպիսի շարժում և, վոր իրեն նպատակ ե դնում հաղթահարել տեխնիկական այժմյան նորմաները, հաղթահարել դոյտեթյուն ունեցող նախաղծային կարողությունները, հաղթահարել դոյտեթյուն ունեցող արտադրական պլաններն ու հաշվեկշիռները: Հաղթահարել, վորովհետև գրանք, հենց այդ նորմաներն արդեն հնացել են մեր որերի համար, մեր նոր մարդկանց համար: Այդ շարժումը խորտակում է տեխնիկայի վերաբերյալ հին հայացքները, խորտակում է տեխնիկական հին նորմաները, նախաղծային հին կարողությունները, արտադրական հին պլանները և պահանջում է նոր, ավելի բարձր տեխնիկական նորմաներ, նախաղծային կարողություններ, արտադրական պլաններ ստեղծել: Նա կոչված է հեղափոխություն կատարելու մեր արդյունաբերության մեջ: Այդ իսկ պատճառով, նա,

ստախանովյան չարժումն, իր հիմքում խորապես հեղափոխական է:

Այսուղ արդեն ասացին, վոր ստախանովյան շարժումը վորպես նոր, ավելի բարձր տեխնիկական նորմաների արտահայտություն, իրենից ներկայացնում և աշխատանքի այն բարձր արտադրողականության տիպարը, վոր կարող է առաջ միմիայն սոցիալիզմը և վորը չի կարող տալ կապիտալիզմը: Այդ միանգամայն ճիշտ է: Ինչո՞ւ կապիտալիզմը ջախջախեց և հաղթահարեց Փեողալիզմին: Վորովհետև նա ստեղծեց աշխատանքի արտադրողականության ավելի բարձր նորմաներ, նա հնարակություն տվեց հասարակությանը՝ անհամեմատ ավելի արտադրանք ստանալու, քան այդ տեղի ուներ Փեովհալական կարգերում: Վորովհետև նա ավելի հարուստ դարձրեց հասարակությանը: Ինչո՞ւ սոցիալիզմը կարող է հաղթել պետք և հաղթի և անպայման կաղթի անտեսության կապիտալիստական սիստեմին: Վորովհետև նա կարող է աշխատանքի ավելի բարձր որինակներ, աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն տալ, քան անտեսության կապիտալիստական սիստեմը: Վորովհետև նա կարող է ավելի շատ արդյունքներ տալ հասարակությանը և կարող է հասարակությանն ավելի հարուստ դարձնել, քան անտեսության կապիտալիստական սիստեմը:

Վորմանք կարծում են, թե սոցիալիզմը կարելի յեմբացնել՝ մարդկանց վորոշ չափով նյութապես հավասարեցնելով՝ չքավորական կյանքի բազայի վրա: Այդ ճիշտ չե: Դա սոցիալիզմի մանր-բուրժուական պատկերացումն է: Իրոք սոցիալիզմը կարող է հաղ-

թել միմիայն աշխատանքի ավելի բարձր արտադրու-
ղականության բազայի վրա, ավելի բարձր, քան կա-
պիտակիզմի պայմաններում, արտադրանքների և
սպառման ամեն տեսակ առարկաների առատության
բազայի վրա, հասարակության բոլոր անդամների
ունեոր և կուլտուրական կյանքի բազայի վրա: Բայց
վորպեսզի սոցիալիզմը կարողանա հասնել իր այդ
նպատակին և ամենից ավելի ունեոր դարձնել մեր
խորհրդային հասարակությանը, անհրաժեշտ և ունե-
նալ յերկրում աշխատանքի այնպիսի արտադրողակա-
նություն, վորը գերազանցում և կապիտալիստական
առաջավոր յերկրների աշխատանքի արտադրողակա-
նությունից: Առանց դրան մտածելն անդամ ավելորդ
և արտադրանքների և սպառման ամեն տեսակ առար-
կաների առատության մասին: Ստախանուվյան շարժ-
ման նշանակությունը կայանում է նրանում, վոր նա
հանդիսանում և մի այնպիսի շարժում, վորը խոր-
տակում և տեխնիկական հին նորմաները վորպես ան-
բարձրաբ նորմաներ, մի շարք գեղագերում գերազան-
ցում և կապիտալիստական առաջավոր յերկրների աշ-
խատանքի արտադրողականությունից և արդարակ-
ության հարավորություն և ստեղծում մեր յեր-
կրում սոցիալիզմն ել ավելի ամբացնելու, հնարավո-
րություն և ստեղծում մեր յերկիրն ամենաունեոր
յերկիրը դարձնելու համար:

Սակայն դրանով չի սպառվում ստախանուվյան
շարժման նշանակությունը: Նրա նշանակությունը
նաև կայանում է նրանում, վոր նա նախապատրաս-
տում և պայմաններ սոցիալիզմից կոմունիզմին անց-
նելու համար:

Սոցիալիզմի սկզբունքը կայանում և նրանում,

վոր սոցիալիստական հասարակության մեջ ամեն
մեկն աշխատում է ըստ իր ընդունակությունների և
սպառման առարկաներն ստանում ե վո՛չ թե ըստ իր
պահանջմունքների, այլ ըստ այն աշխատանքի, վոր
նա կատարել է հասարակության համար: Այդ նշանա-
կում ե, վոր բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկա-
կան մակարդակը դեռ բարձր չե, մտավոր և Փիզիկա-
կան աշխատանքի հակադրությունը շարունակում է
գոյություն ունենալ, աշխատանքի արտադրողականու-
թյունը դեռ այնքան ել բարձր չե, վոր ապահովի
սպառման առարկաների առատությունը, ուստի և
հասարակությունը հարկադրված է սպառման առար-
կաները բաշխելու վոչ թե ըստ հասարակության ան-
դամների պահանջմունքների, այլ հասարակության
համար նրանց կատարած աշխատանքի համեմատ:

Կոմունիզմը ներկայացնում է զարգացման ավելի
բարձր աստիճանը: Կոմունիզմի սկզբունքը կայանում
է նրանում, վոր կոմունիստական հասարակության
մեջ ամեն մեկն աշխատում է ըստ իր ընդունակու-
թյունների և սպառման առարկաներն ստանում է վո՛չ
թե ըստ այն աշխատանքի, վոր նա կատարել ե, այլ
կուլտուրապես զարգացած մարդու այն պահանջմունք-
ների համաձայն, վոր ունի նա: Այդ նշանակում ե,
վոր բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական
մակարդակը բավականաչափ բարձրացել ե, վորպես-
զի նա կարողանա խախտել մտավոր աշխատանքի ու
Փիզիկական աշխատանքի միջև գոյություն ունեցող
հակադրության հիմքերը, վոր մտավոր աշխատանքի
ու Փիզիկական աշխատանքի հակադրությունն արդեն
չքացել ե, իսկ աշխատանքի արտադրողականությու-
նը հասել ե այնպիսի բարձր աստիճանի, վոր կարող

ե ապահովել սպառման առարկաների լիակատար առատությունը, ուստի և հասրակությունը հնարավորություն ունի այդ առարկաները բաշխելու ըստ իր անդամների պահանջմունքների:

Վոմանք կարծում են, թե մտավոր աշխատանքի ու Փիզիկական աշխատանքի հակադրությունը կարելի չե վոչչացնել վորոշ չափով կուլտուրապետականի կամպեն հավասարեցնելով մտավոր ու Փիզիկական աշխատաղներին՝ ճարտարագետների ու տեխնիկների, մտավոր աշխատաղների կուլտուր-տեխնիկական մակարդակն իշեցնելու և միջին վորակում ունեցող բանվորների մակարդակին հասցնելու միջոցով։ Այդ բնակ ճիշտ չե։ Այդպես կարող են մտածել կոմունիզմի մասին միմիայն մանր-բուրժուական շաղակարանները։ Իրոք մտավոր աշխատանքի ու Փիզիկական աշխատանքի հակադրությունը վոչչացնել կարելի յե միմիայն բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը բարձրացնելու և ճարտարագետ-տեխնիկական աշխատանքի մակարդակին հասցնելու միջոցով։ Ծիծաղելի կլինիկա կարծել, թե այդպիսի վերելքն անիրադորժելի յե։ Այդ կատարելապես իրազործելի յե խորհրդային հասարակակարգի պայմաններում, վորտեղ յերկրի արտադրողական ուժերն ազատազրված են կապիտալիզմի կապանքներից, վորտեղ աշխատանքն ազատազրված ե չահագործման ճնշումից, վորտեղ իշխանության գլուխ ե կամսպած բանվոր դասակարգը և վորտեղ բանվոր դասակարգի յերիտասարդ սերունդը բոլոր հնարավորություններն ունի ապահովելու իր տեխնիկական բավականաչափ կրթությունը։ Վոչ մի հիմք չկա կասկածելու, վոր միմիայն բանվոր դասա-

կարգի կուլտուր-տեխնիկական այդպիսի վերելքը կարող ե խախտել մտավոր աշխատանքի և Փիզիկական աշխատանքի հակադրության հիմքերը, վոր միմիայն նա կարող ե ապահովել աշխատանքի այն բարձր արտադրողականությունը և սպառման առարկաների այն առատությունը, վորոնք անհրաժեշտ են նրա համար, վորպեսզի ոկտենք անցումը սոցիալիզմից կոմունիզմին։

Այս սունչությամբ ստախանույան շարժումը նշանակալից ե այն տեսակետից, վոր նա սպառումակում և մեր յերկրի բանվոր դասակարգի հենց այդպիսի կուլտուր-տեխնիկական վերելքի առաջին սաղմերը, ճիշտ ե, զեռևս թույլ, բայց և այնպես սաղմեր։

Իրկապես, դիտեցեք ընկեր ստախանովականներին։ Ի՞նչ մարդիկ են դրանք։ Դրանք, գլխավորապես, յերիտասարդ կամ միջին տարիքի բանվորներ ու բանվորուհիներ են, կուլտուրական ու տեխնիկապես կոփված մարդիկ, վորոնք աշխատանքի ճշգրտության, ճշտապահության որինակներ են տալիս, վորոնք գիտեն դնահատել ժամանակի գործոնն աշխատանքի համար և սովորել են ժամանակը վո՛չ միայն բովեներով, այլև վայրկյաններով հաշվել։ Նրանց մեծամասնությունն անցել ե այսպես կոչված տեխնիկական մինիմումը և շարունակում ե լրացնել իր տեխնիկական կրթությունը։ Նրանք աղատ են միքանի ճարտարագետների, տեխնիկների ու տնտեսավարների պահպանողականությունից ու ճահճացումից, նրանք խիզախորեն առաջ են գնում, խորտակելով տեխնիկական հնացած նորմաները և ստեղծելով նոր, ավելի բարձր նորմաներ, նրանք ուղղումներ են մտցնում մեր

արդյունաբերության զեկավարների կազմած նախադատյն կարողությունների ու տնտեսական պլանների մեջ, նրանք շարունակ լրացնում և ուղղում են ճարտարագետներին ու տեխնիկներին, նրանք հաճախ սովորեցնում և առաջ են մղում նրանց, վորովհետև նրանք այնպիսի մարդիկ են, վորոնք կատարելապես տիրապետել են իրենց գործի տեխնիկային և դիտեն տեխնիկայից քամել այն առավելագույնը, ինչ կարելի յե քամել նրանից: Այսոր գեր ստախանովականները քիչ են, բայց ո՞վ կարող ե կառկածել, վոր վաղը նրանք տասնապատիկ ավելի կլինեն: Մի՞թե պարզ չէ, վոր ստախանովականները հանդիսանում են նորարաններ մեր արդյունաբերության մեջ, վոր ստախանովայան շարժումը ներկայացնում ե մեր ինդուստրիայի առաջան, վոր նա պարունակում ե բանվորդասակարգի ապագա կուլտուր-տեխնիկական վերելքի սերմը, վոր նա բաց ե անում մեր առաջ այն ուղին, վորով միայն կարելի յե համել աշխատանքի արտադրողականության այն բարձրագույն ցուցանիշներին, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմից կոմունիզմին անցնելու և մտավոր աշխատանքի ու Փիզիկական աշխատանքի հակադրությունը վոչչայնելու համար:

Այս ե, ընկերներ, ստախանովայան շարժման նշանակությունը մեր սոցիալիստական ընարարության գործում:

Արդյոք Ստախանովը և Բուսիդինը մտածում եյին ստախանովայան շարժման այս մեծ նշանակության մասին, յերբ նրանք ձեռնամուխ եյին լինում տեխնիկական հին նորմաները խորտակելուն: Իհարկե, վո՛չ: Նրանք իրենց հոգսերն ունեյին, նրանք ձգտում եյին դուրս

բերել ձեռնարկությունը ձեղքվածքից և գերակատարել տնտեսական պլանը: Սակայն ձգտելով այդ նպատակին, նրանք հարկադրված եյին խորտակել տեխնիկական հին նորմաները և զարգացնել աշխատանքի այնպիսի բարձր արտադրողականություն, վորը գերազանցում ե կապիտալիստական առաջավոր յերկրությունից: Սակայն ծիծաղելի կլիներ կարծել, վոր այդ հանդամանքը կարող ե թեկուզ վորեւե չափով նվազեցնել ստախանովականների շարժման պատմական մեծ նշանակությունը:

Նույնը կարելի յե ասել այն բանվորների մասին, վորոնք մեր յերկրում առաջին անգամ Բանվորների Պատգամավորների Խորհուրդներ կազմակերպեցին 1905 թվին: Նրանք, իհարկե, չեյին կարծում, վոր Բանվորների Պատգամավորների Խորհուրդները սոցիալիստական կարգերի հիմք կծառայեն: Նրանք միայն պաշտպանվում եյին ցարիզմից, բուրժուազիայից՝ Բանվորների Պատգամավորների Խորհուրդներ ստեղծելով: Սակայն այդ հանդամանքը բնալ չի հակառակ այն անկանածելի փաստին, վոր Բանվորների Պատգամավորների Խորհուրդների համար 1905 թվականին Լենինգրադի ու Մոսկվայի բանվորների սկսած շարժումը, վերջին հաշվով, բերեց-հասցրեց կապիտալիզմի զախցախմանը և սոցիալիզմի հաղթանակին աշխարհի մեկ վեցերորդ մասում:

2. ԱՍԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Այժմ մենք գտնվում ենք ստախանովյան շարժման որրանի մոտ, նրա ակունքների մոտ:

Արժեր նշել ստախանովյան շարժման միքանի բնորոշ գծերը:

Ամենից առաջ աչքի յե ընկնում այն փաստը, վոր նա, այդ շարժումն սկսվեց ինչ-վոր ինքնարերարար, համարյա տարերայնորեն, ներքևից, առանց մեր ձեռնարկությունների վարչությունների վորեն ճնշման: Դեռ ավելին: Այդ շարժումը ծնունդ առավել ծավալվել սկսեց վորոշ չափով հակառակ մեր ձեռնարկությունների վարչությունների կամքին, նուրնիսկ պայքար մղելով նրա դեմ: Բնկ. Սոլոտովը ձեզ արդեն պատմեց, թե ինչպիսի տանջանքներ ե ստիպված յեղել կրելու Արխանգելսկի փայտասղոցարանի բանվոր ընկեր Մուսինսկին, յերբ նա տնտեսական կազմակերպությունից գաղտնի, վերահսկիչներից գաղտնի մշակում եր նոր, ավելի բարձր տեխնիկական նորմաներ: Հենց իր՝ Ստախանովի հակատագիրն ավելի լավ չի յեղել, վորովհետեւ նա հարկադրված եր իր առաջշխ յեղել, վորովհետեւ նա հարկադրված եր իր առաջշխ շարժման ընթացքում պաշտպանվել վո՞չ միայն վարչարժման մի քանի պաշտոնյաներից, այլև միքանի բանվորներից, վորոնք ծաղրում ու հալածում նյին բանվորներից, վորոնք ծաղրում ու հալածում նյին բանվորներից» համար: Ինչ վերաբերան «նորամուծությունների» համար: Ինչ վերաբերան «նորամուծությունների» համար քիչ եր մնում աշխատանքից զրկվեր գործարանում, և միայն յեխի պետ

ընկ. Սոկոլինսկու միջամտությունն ոգնեց նրան գործարանում մնալու:

Ինչպես տեսնում եք, յեթե մեր ձեռնարկությունների վարչության կողմից վորեւե ներգործություն ել յեղել ե, ապա այդ վո՞չ թե ընդառաջել ե ստախանովյան շարժմանը, այլ նրա գեմ ե զնացել: Հետեւբար, ստախանովյան շարժումը ծնունդ ե առել և ծալվալվել ե վորպես ներքեւից ընթացող շարժում: Յեվ հատկապես այն պատճառով, վոր նա ծնունդ ե առել ինքնարեւբար, հատկապես այն պատճառով, վոր նա ներքեւից ե ընթանում, նա մեր ժամանակի ամենակենսունակ և անհաղթահարելի շարժումն ե հանդիսանում:

Ապա պետք է կանգ առնել նաև ստախանովյան շարժման մի այլ բնորոշ գծի վրա: Այդ բնորոշ գիծը կայանում է նրանում, վոր ստախանովյան շարժումը տարածվեց մեր ամբողջ Միության յերեսովը մեկ վո՞չ թե ստիճանաբար, այլ ինչ-վոր չտեսնված արագությամբ, ինչպիս միրիկը: Ինչի՞ց սկսվեց բանը: Ստախանովն ածխի հանույթի տեխնիկական նորման բարձրացրեց 5 կամ 6 անգամ, յեթե վոչ ավելի: Բուսիգինը և Սմետանինը նույնն արին, մեկը՝ մեքենաշինության ասպարեզում, մյուսը՝ կոշկենի արդյունաբերության ասպարեզում: Թերթերը հաղորդեցին այդ փաստերի մասին: Յեվ հանկարծ ստախանովյան շարժման բոցը բռնեց ամբողջ յերկիրը: Ինչո՞ւմն է այստեղ բանը: Վո՞րտեղից ստացվեց այդ արագությունը ստախանովյան շարժման տարածման գործում: Գուցե Ստախանովը և Բուսիգինը հանդիսանում են ԽՍՀՄ մարզերում ու ըրջաններում մեծ կապեր ունեցող մեծ կազմակերպիչներ և նրանք իրե՞նք

Են կազմակերպել այդ գործը: Վո՛չ, իհարկե, վո՛չ:
Գուցե Ստախանովը և Բուսիդինը հավակնություն
ունեն մեր յերկրի մեծ դեմքե՞րը լինելու և նրանք
իրե՞նք են տարածել ստախանովյան շարժման կայ-
ծերն ամբողջ յերկրում: Այդ ել ճիշտ չէ: Այսուեղ
դուք աեսաք Ստախանովին և Բուսիդինին: Նրանք
հանդես յեկան խորհրդակցությանը: Դրանք պարզ
ու համեստ մարդիկ են, առանց համամիութենական
մասշտաբի դեմքերի դափնիներ վաստակելու վորեւ
հավակնության: Ինձ նույնիսկ թվում ե, վոր նրանք
մի քիչ շփոթված են շարժման այն թափից, վորը
ծավալվեց մեզ մոտ հակառակ նրանց սպասածի:
Յեվ յեթե, չնայած դրան, Ստախանովի ու Բուսիդի-
նի նետած լուցկիները բավական յեղան, վոր ամբողջ
գործը բոցավառվի, ապա այդ նշանակում ե, վոր
ստախանովյան շարժումը կատարելապես հասունացած
գործ ե հանդիսանում: Միմիայն այն շարժումը, վորը
կատարելապես հասունացել ե և մղումի յե սպասում
ասպարեզ գալու համար, միմիայն այդպիսի շարժումը
կարող եր այդքան արագորեն տարածվել ու մեծանալ
ձնագնդի նման:

Ինչո՞վ բացատրել այն հանդամանքը, վոր ստա-
խանովյան շարժումը լիովին հասունացած մի գործ
հանդիսացավ: Վո՞րտեղ են այն սպատճառները, վոր նա
այդպես արագ ծավալում ստացավ: Վորո՞նք են ստա-
խանովյան շարժման արմատները:

Նրանք, այդ սպատճառները, առնվազն չորս են:

1) Ստախանովյան շարժման հիմք ծառայեց ամե-
նից առաջ բանվորների նյութական դրության արմա-
տական բարելավումը: Կյանքն ավելի լավ ե դարձել,
ընկերներ: Կյանքն ավելի ուրախ ե դարձել: Իսկ յերբ

ուրախ ես ապրում, աշխատանքը հաջող ե գնում:
Սրանից ել ստացվում են արտադրական բարձր նոր-
մաները: Սրանից ել առաջ են դալիս աշխատանքի հե-
րոսներն ու հերոսուհիները: Այս ե ամենից առաջ
ստախանովյան շարժման արմատը: Յեթե մեզ մոտ
ճգնաժամ լիներ, յեթե մեզ մոտ գործադրկություն՝
բանվոր դասակարգի այդ պատուհասը լիներ, յեթե
մեզ մոտ կյանքը վատ, խղճուկ, տխուր լիներ, ապա
վոչ մի ստախանովյան շարժում չեր լինի մեզ մոտ:
(Ծափահարություններ): Մեր պրոլետարական հեղա-
փոխությունը հանդիսանում է աշխարհիս միակ հեղա-
փոխությունը, վորին վիճակվեց ցույց տալ ժողովրդին
վո՛չ միայն իր քաղաքական արդյունքները, այլև նյու-
թական արդյունքները: Բանվորական բոլոր հեղափո-
խություններից մենք միայն մեկը դիտենք, վորը մի
կերպ իշխանության հասավ: Դա Փարթիղի Կոմունան
եր: Սակայն նա յերկար գոյություն չունեցավ: Նա,
ճիշտ ե, փորձեց խորտակել կապիտալիզմի կապանք-
ները, սակայն չկարողացավ խորտակել դրանք և առա-
վել ես չկարողացավ ցույց տալ ժողովրդին հեղափո-
խության նյութական բարոր արդյունքները: Մեր հե-
ղափոխությունը հանդիսանում ե միակը, վորը վո՛չ
միայն վշրեց կապիտալիզմի շղթաները և ազատու-
թյուն տվեց ժողովրդին, այլև կարողացավ նաև նյու-
թական պայմաններ տալ ժողովրդին ունենալ կյանքի
համար: Դրանումն ե մեր հեղափոխության ուժն ու
անպարտելիությունը: Իհարկե, լավ բան ե կապիտա-
լիստներին՝ վոնդելը, կալվածատերերին վոնդելը, ցա-
րական ոպրիչներին վոնդելը, իշխանությունը
վերցնելն ու ազատություն ստանալը: Այդ շատ լավ ե:
Բայց դժբախտաբար միայն ազատությունը գեռ շատ



քիչ ե: Յեթե հայը պակաս ե, յեթե յուղն ու ձեթը պակաս են, կտորեղենը պակաս ե, բնակարանները վասեն, ապա միմիայն ազատությամբ շատ հեռու չես գնա: Շատ դժվար ե, ընկերնելք, միայն ազատությամբ ապրելը: (Հավանության բացականություններ): Վորագեսղի կարելի լինելով և ուրախ ապրել, անհրաժեշտ ե, վոր քաղաքական ազատության բարիքները լրացվեն նյութական բարիքներով: Մեր հեղափոխության բնորոշ առանձնահատկությունը կայանում է նրանում, վոր նա ժողովրդին վո'չ միայն ազատություն, այլև նյութական բարիքները, այլև ունենոր ու կուտարական կյանք վարելու հնարաւորություն տվեց: Ահա թե ինչու մեզ մոտ կյանքն ուրախ ե դարձել, և ահա թե ինչ հողի վրա յե աճել ստախանովյան շարժումը:

2) Ստախանովյան շարժման յերկրորդ աղբյուրը մեզ մոտ շահագործման բացակայությունն ե հանդիսանում: Մարդկական մեկ մոտ վո'չ թե շահագործողների համար, վո'չ թե պոլտարույժներին հարստացնելու համար են աշխատում, այլ իրենց համար, իրենց գասակարգի համար, իրենց՝ խորհրդային հասարակության համար, վորտեղ իշխանության գլուխ են կանգնած բանվոր դասակարգի լավագույն մարդիկ: Այդ պատճառով ել աշխատանքը մեզ մոտ հասարակական նշանակություն ունի, նա հանդիսանում է պատվի ու փառքի գործ: Կաղիտավլիդմի պայմաններում աշխատանքը մասնավոր, անձնական բնույթ ունի: Շատ արտադրեցիր՝ շատ ել ստացիր և ապրիր քեզ համար, ինչպես գիտես: Քեզ վոչ վոք չի ճանաչում և ճանաչել չի ուզում: Դու աշխատում ես կապիտալիստներից համար, դու նրանց հարստացնո՞ւմ

ես: Եեվ այլ կերպ ինչպես կարող եր լինել: Հենց նրա համար ել վարձել են քեզ, վոր դու հարստացնես շահագործողներին: Դու համաձայն չես դրան՝ մտի՛ր զործագուրկների շարքերը և քարչ տուր գոյությունդ՝ ինչպես կարող ես, —ուրիշներին, ավելի համակերպլողներին կդանենք: Այդ իսկ պատճառով մարդկանց աշխատանքը բարձր չի գնահատվում կապիտալիզմի պայմաններում: Հասկանալի յե, վոր այդ պայմաններում ստախանովյան շարժումը չի կարող տեղ ունենալ: Այլ բան ե խորհրդային հասարակակարգի պայմաններում: Այստեղ աշխատավոր մարդը պատիվ ունի: Այստեղ նա աշխատում է վո'չ թե շահագործողների համար, այլ իրեն համար, իր դասակարգի համար, հասարակության համար: Այստեղ աշխատավոր մարդը չի կարող իրեն լրիված ու մենակ գգալ: Ընդհակառակը, մեզ մոտ աշխատավոր մարդն իրեն զգում է իր յերկրի աղատ քաղաքացին, մի տեսակ՝ հասարակական դործիչ: Եեվ յեթե նա լուլ և աշխատում և հասարակությանը տալիս ե այն, ինչ վոր կարող ե տալ, —նա աշխատանքի հերոս ե, նա փառքով ե պատված: Հասկանալի յե, վոր միայն այդպիսի պայմաններում կարող եր ծնունդ առնել ստախանովյան շարժումը:

3) Ստախանովյան շարժման յերրորդ աղբյուրը պետք է համարել մեզ մոտ նոր տեխնիկայի առկայությունը: Ստախանովյան շարժումն որդանապես կապված է նոր տեխնիկայի հետ: Առանց նոր տեխնիկայի, առանց նոր գործարանների ու ֆաբրիկաների, առանց նոր սարքավորման՝ ստախանովյան շարժումը չեր կարող ծնունդ առնել մեզ մոտ: Առանց նոր տեխնիկայի՝ տեխնիկական նորմաները կարելի յե բարձրաց-

նել մեկ-յարկու ամպամ—վոչ ավելի : Յեշե ստախա-
նովականները տեխնիկական նորմաները բարձրացրին
հինգ և վեց անգամ, ապա այդ նշանակում են, վոր
նրանք ամբողջովին և լիովին նոր տեխնիկայի վրա
յեն հենվում : Այսպիսով, դուրս են դալիս, վոր մեր
յերկրի ինդուստրացումը, մեր գործարանների ու
ֆաբրիկաների վերակառուցումը, նոր տեխնիկայի և
նոր սարքավորման առկայությունը ստախանովյան
շարժումը ծնող պատճառներից մեկը հանդիսացան :

4) Սակայն միայն նոր տեխնիկայով շատ հեռու
չես դնա : Կարելի յե առաջնակարգ տեխնիկա, առաջ-
նակարգ գործարաններ, ու ֆաբրիկաներ ունենալ,
բայց յեթե չկան այդ տեխնիկան թամբելու ընդունակ
մարդիկ, տեխնիկան հենց մերկ տեխնիկա ել կմնա
ձեզ մոտ: Վորպեսդի նոր տեխնիկան կարողանա իր
արդյունքները տալ, հարկաւոր ե ունենալ նաև մար-
դիկ, բանվորների ու բանվորուհիների այնպիսի կադ-
րեր, վորոնք ընդունակ լինեն տեխնիկայի դրույ-
կանգնելու և առաջ մղելու այն: Ստախանովյան
շարժման ծնունդն ու աճումը նշանակում են, վոր մեզ
մոտ արդեն բանվորների ու բանվորուհիների մեջ
ծնունդ են առել այդպիսի կադրեր: Մոտ յերկու տա-
րի առաջ կուսակցությունն ասել են, վոր նոր գործա-
րաններ ու ֆաբրիկաներ կառուցելով և մեր ձեռնար-
կություններին նոր սարքավորում տալով, մենք գոր-
ծի կեսը միայն արինք: Կուսակցությունն այն ժա-
մանակ ասաց, վոր նոր գործարանների կառուցման
խանդավառությունը պետք են լրացնել նրանց յուրաց-
ման խանդավառությամբ, վոր միայն այդ ճանա-
պարհով կարելի յե գործը մինչեւ վերջը հասցնել:
Ակներե ե, վոր այս յերկու տարվա ընթացքում տեղի

յե ունեցել այդ նոր տեխնիկայի յուրացումը և նոր
կադրերի առաջցումը: Այժմ պարզ ե, վոր այդպիսի
կադրեր մենք արդեն ունենք: Հասկանալի յե, վոր ա-
ռանց այդպիսի կադրերի, առանց այդ նոր մարդկանց
մեջ մոտ ստախանովյան վո՛չ մի շարժում չեր լինի:
Այսպիսով, բանվորների ու բանվորուհիների մեջ նոր
տեխնիկան յուրացը նոր մարդիկ հանդիսացան այն
ուժը, վորը ձեւավորեց ու առաջ մղեց ստախանովյան
շարժումը:

Ահա այն պայմանները, վորոնք ծնեցին ու առաջ
մղեցին ստախանովյան շարժումը:

3. ՆՈՐ ՄԱՐԴԻԿԱ—ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐ ՆՈՐՄԱՆԵՐ

Յես ասուցի, վոր ստախանովյան շարժումը զարդացավ վո՛չ թէ աստիճանականության կարգով, այլ ինչ-վոր որակալար ճեղքող ողալիումի կարգով։ Ակնհայտ է, վոր նու ստիպված եր ինչ-վոր խոչընդուներ հաղթահարելու։ Մեկը նրան խանդարում էր, մեկը նրան սեղմում էր, և ահա ստախանովյան շարժումն ուժեր կուտակելով ճեղքեց այդ խոչընդուները և հեղեղեղ յերկիրը։

Բանն ինչո՞ւմն է այստեղ. իրոք ո՞վ եր խանդարում։

Խանդարում ելին տեխնիկական հին նորմաները և այդ նորմաների թիկունքին կանոնած մարդէկ։ Միքանի տարի առաջ մեր ճարտարագետ-տեխնիկական և տնտեսական աշխատողները տեխնիկական վորոշ նորմաներ կազմեցին՝ հարմարեցրած մեր բանվորների ու բանվորուհիների տեխնիկական հետամնացությանը։ Այդ ժամանակից անցել է միքանի տարի։ Այդ ժամանակամիջոցում մարդիկ տեխնիկապես աճեցին և կոփ-վեցին։ Իսկ տեխնիկական նորմաներն անփոփոխ ելին մնում։ Հասկանալի յէ, վոր այդ նորմաներն այժմ հնացած դուրս յեկան մեր նոր մարդկանց համար։ Այժմ բոլորն ել հայնոյում են զործող տեխնիկական նորմաները։ Բայց չե՞ վոր դրանք յերկնքից չեն իշել։ Յել բանն այստեղ ամենաերին նոր մարդկանց չե, վոր այդ տեխնիկական նորմաները ժամանակին կազմվել

են վորպես ցածր նորմաներ։ Բանն ամենից առաջ նրանումն է, վոր այժմ, յերբ այդ նորմաներն արդեն հնացել են, փորձում են պաշտպանել դրանք, վորպես ժամանակակից նորմաներ։ Կառչում են մեր բանվորների և բանվորուհիների տեխնիկական հետամնացությանը, այդ հետամնացության համաձայն են շարժվում, յենում են հետամնացությունից, և վերջապես բանն այն տեղն է հասնում, վոր սկսում են հետամնացություն խաղալ։ Ե՛, իսկ ի՞նչ անենք, յեթե այդ հետամնացությունն անցյալի դիրկն է գնում։ Մի՞թե մենք պետք ե խոնարհվենք մեր հետամնացության առաջ և այն դարձնենք սրբապատկեր, Փետիչ։ Ի՞նչ անենք, յեթե բանվորներն ու բանվորուհիներն արդեն կարողացել են տեխնիկապես աճել և կոփվել։ Ի՞նչ անենք, յեթե հին տեխնիկական նորմաները դադարել են իրականությանը համապատասխանելուց, իսկ մեր բանվորներն ու բանվորուհիներն արդեն իրականում կարողացել են գերազանցել դրանք հնդապատիկ, տասնապատիկ։ Մի՞թե մենք յերեմիցե հայլատարմության յերդում ենք տվել մեր հետամնացությանը։ Կարծեմ այդպիսի բան չի յեղել, ընկերներ։ (Ընդհանուր ծիծաղ)։ Մի՞թե մեր յելակետն է յեղել այն, վոր մեր բանվորներն ու բանվորուհիները համարյան հենց այնպես հետամնաց են մնալու։ Կարծես թե մենք այդպիսի յելակետ չենք ունեցել։ (Ընդհանուր ծիծաղ)։ Այն ժամանակ բանն ինչո՞ւմն է։ Մի՞թե մենք բավականաչափ համարձակություն չենք ունենա կոռորեկտ մեր ճարտարագետներից ու տեխնիկներից վոմանց պահպանողականությունը, խորտակելու հին տրաղիցիաներն ու նորմաները և լայն ասպարեզ տալու բանվոր դասակարգի նոր ուժերին։

Գիտության մասին են խոսում: Ասում են, թե գիտության տվյալները, տեխնիկական տեղեկատուների և հրահանդների տվյալները հակասում են ստախանովականների նոր, ավելի բարձր տեխնիկական նորմաների վերաբերյալ պահանջներին: Բայց խոսքն այստեղ վո՞ր գիտության մասին ե: Գիտության տվյալները միշտ ստուգվել են պրակտիկայի, փորձի միջոցով: Մի գիտություն, վորը կարել է կապերը պրակտիկայից, փորձից, —եւ ի՞նչ գիտություն ե: Յեթե գիտությունն այնպես լիներ, ինչպես պատկերացնում են մեր միջանի պահպանողական ընկերները, ապա այն վաղուց կորած կլիներ մարդկության համար: Գիտությունը հենց նրա համար եւ գիտություն ե կոչվում, վոր նա Փետիչներ չի ընդունում, չի վախենում ձեռք բարձրացնելու իր դարն ապրածի, հնի վրա և ուշադիր ականջ և գնում փորձի, պրակտիկայի ճայնին: Յեթե բանն այլ կերպ լիներ, մենք առհասարակ գիտություն չեյինք ունենա, չեյինք ունենա, ասենք թե, աստղաբաշխությունը, և մենք գեռես յուա կդնայինք Պաղսմեսուի հնամաշ սիստեմով, մենք չեյինք ունենա կենսաբանություն, և դեռևս կմխիթարվեյինք մարդու ստեղծագործության լեզենդայով, մենք չեյինք ունենա քիմիա, և դեռես յուա կդնայինք ալքիմիկների գուշակություններով:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր մեր ճարտարագետ-տեխնիկական և տնտեսական աշխատողները, վորոնք արդեն բավականաչափ հետ են մնացել ստախանովյան շարժումից, լավ կանելին, յեթե դադարելին հին տեխնիկական նորմաներին կառչելուց և ինչպես հարկն ե, գիտականորեն, նոր, սատախանովյան ձեռով վերակառուցվելին:

Լա՛վ, կասեն մեզ: Բայց ի՞նչպես վարվել տեխնիկական նորմաների հետ ընդհանրապես: Արդյոք նրանք հարկավո՞ր են արդյունաբերությանը, թե կարելի յել յուա գնալ բոլորովին առանց վորեն նորմայի:

Վոմանք ասում են, թե մեզ այլևս վոչ մի տեխնիկական նորմա հարկավոր չե: Այդ ճիշտ չե, ընկերներ: Դեռ ամելին. այդ հիմարություն ե: Պահնային տնտեսությունն անհնարին և առանց տեխնիկական նորմաների: Բայցի գրանից, տեխնիկական նորմաները հարկավոր են նրա համար, վորպեսզի հետ մնացող մասսաներին հասցնենք առաջարկություններին: Տեխնիկական նորմաները կարգավորող մեծ բանվրական լայն մասսաներին կազմակերպում են բանվոր գասակարդի առաջալոր տարրերի շուրջը: Հետեաբար, տեխնիկական նորմաները մեզ հարկավոր են, բայց վոչ այն նորմաները, վորոնք այժմ գոյություն ունեն, այլ ավելի բարձր նորմաներ:

Մյուսներն ասում են, թե տեխնիկական նորմաները հարկավոր են, բայց պետք և գրանք հասցնել այժմ իսկ այն նվաճումներին, վորոնց հասել են Ստախանովյաները, Բուտիգիները, Վինոգրադովյաները և ուրիշները: Այս եւ ճիշտ չե: Այդպիսի նորմաները ռեալ չեյին լինի ներկա ժամանակի համար, վորովհետեւ այն բանվորներն ու բանվորներիները, վորոնք տեխնիկապես պակաս են կոփկած, քան Ստախանովյաները և Բուտիգիները, չեյին կարողանա արդարի նորմաներ իրագործել: Մեզ հարկավոր են այնպիսի տեխնիկական նորմաներ, վորոնք գտնվեն այժմյան տեխնիկական նորմաների և այն նորմաների միջև, վորոնց հասել են-

Ստախանովներն ու Բուսիդինները : Վերցնենք , որինակ , ճակնդեղի գծով բոլորին հայտնի հինդհարյուրական Մարիա Դեմչենկոյին : Նա հասել է հեկտարին հինդհարյուր և ավելի ցենտներ ճակնդեղի բերքի : Կարելի՞ յեւ արդյոք այս նվաճումը բերքատվության նորմա դարձնել ամբողջ ճակնդեղագործական տնտեսության համար , ասենք , Աւկրախնայում : Վո՛չ , չի կարելի : Առայժմ գրա մասին խոսելը վաղ է : Մարիա Դեմչենկոն հասել է մեկ հեկտարին 500 և ավելի ցենտներ բերքի , իսկ ճակնդեղի միջին բերքը , որինակ , Ուկրաինայում , այս տարի կազմում է հեկտարին 130—132 ցենտներ : Ինչպես տեսնում եք , տարբերությունը փոքր չե : Կարելի՞ յեւ արդյոք ճակնդեղի բերքատվության համար 400 կամ 300 ցենտների նորմա տալ : Գործին գիտակ բոլոր մարդիկ ասում են , վոր առայժմ այլպեսի բան չի կարելի անել : Ակներև ե , վոր Ուկրաինայում 1936 թվականի համար սկսած ե հեկտարին 200—250 ցենտներ բերքատվության նորմա տալ : Իսկ այդ նորման փոքր չե , քանի վոր այդ նորման կատարելու դեպքում այն կկարողանա մեզ յերկու անգամ ավելի շաքար տալ , քան 1935 թվին : Նույնը պետք է ասել արդյունաբերության մասին : Ստախանովը գոյությունունեցող տեխնիկական նորման գերազանցել է կարծեմ մի տասն անգամ կամ նույնիսկ ավելի : Այս նվաճումը բոլոր հանքահատ մուրճ բանեցնողների համար նոր տեխնիկական նորմա հայտարարելը խելացի բան չեր լինի : Պարզ է , վոր հարկ կլինի գոյություն ունեցող նորմայի և ընկ . Ստախանովի կենսագործած նորմայի միջև դժոնվող մի նորմա տալու :

Համենայն դեպս , մի բան սկարպ ե . այժմյան տեխնիկական նորմաներն արդեն իրականությանը չեն հա-

մապատասխանում , նրանք հետ են մնացել և արգելակ են դարձել մեր արդյունաբերության համար , իսկ մեր արդյունաբերությունը չարգելակելու համար անհրաժեշտ է այդ նորմաները նոր , ավելի բարձր տեխնիկական նորմաներով փոխարինել : Նոր մարդիկ , նոր ժամանակներ , —տեխնիկական նոր նորմաներ :

4. ՄԵՐՉԱՎՈՐՄԳՈՒՅՆ ԽՆԴԻԲՆԵՐԸ

Խնչո՞ւմն են կայանում մեր մերձավորագույն խընդիրները ստախանովյան շարժման շահերի տեսակետից :

Վորպեսզի չցրենք մեր ուժերը, յեկեք այս գործը վերածենք մերձավոր յերկու խնդրի :

Առաջին: Խնդիրը կայանում է նրանում, վոր ոգնենք ստախանովականներին՝ շարունակելու ստախանովյան շարժման ծավալումը և այն լայն ու խորը տարածելու ԽՍՀՄ բոլոր մարզերում ու շրջաններում : Այս—մեկ կողմից: Յեկ մյուս կողմից—սանձահարենք տնտեսական և ճարտարագետ-տեխնիկական աշխատողների բոլոր այն տարրերին, վորոնք համառորեն կառչում են հնին, չեն ցանկանում առաջ շարժվել և սխտեմափառար արգելակում են ստախոնվյան շարժման ծավալումը : Վորպեսզի ստախանովյան շարժումն ամբողջ թափով ծավալենք մեր յերկը յերեսովը մեկ, դրա համար միմիայն ստախանովականները, իհարկե, բավական չեն: Անհրաժեշտ ե, վոր մեր կուսակցական կազմակերպությունները լծվեն այս գործին և ոգնեն ստախանովականներին՝ շարժումը մինչև վերջը հասցնելու համար : Այս տեսակետից Դոնեցի մարզային կաղակերպությունն անլինելիորեն մեծ նախաձեռնություն է յերեան բերել: Այս իմաստով լավ են աշխատում Մոսկվայի և Լենինգրադի մարզային կազմակերպությունները: Իսկ ի՞նչպես են մյուս մարզերը, նրանք, յերեկի, գեռ նոր «տեղից շարժվում են»: Որինակ, Ռւ-

բալի մասին կարծես վոչ մի տաղեկություն չկա, կամ շատ քիչ տեղեկություն կա, թեև Ռւրալը, ինչպես հայտնի յէ, հոկայական արդյունաբերական կենտրոն ե հանդիսանում: Նույնը պետք է առել Արևմտյան Սիրի-բի մասին, կուղբասի մասին, վորտեղ բոլոր նշաններից յերեւմ ե, վոր դեռ չեն կարողացել «տեղից շարժվել»: Համենայն դեպս, կարելի յէ չկասկածել, վոր մեր կուսակցական կազմակերպությունները կձեռնարկն այդ գործին և կոզնեն ստախանովականներին՝ հաղթահարելու դժվարությունները: Ինչ վերաբերում ե գործի մյուս կողմին,—տնտեսական և ճարտարագետ տեխնիկական աշխատողների միջի համառ պահպանողականներին սանձահարելուն, —ապա այստեղ բանը փոքր ինչ ավելի բարդ է լինելու: Հարկ կլինի առաջին հերթին համոզել, համբերությամբ ու ընկերաբար համոզել արդյունաբերության այս պահպանողական տարրերին, վոր ստախանովյան շարժումն առաջադիմական շարժում ե, և անհրաժեշտ և ստախանովյան ձեռվ վերակառուցվել: Իսկ յեթե համոզելը չողնի, հարկ կլինի ձեռք առնել ավելի վճռական միջոցները: Վերցնենք, որինակ, Հաղորդակցության ձանապարհների ժողկոմատը: Այս ժողկոմատի կենտրոնական ապարատում նորեքս գոյություն ուներ պրոֆեսորների, ճարտարագետների և գործին զիտակ այլ անձերի մի խմբակ, —դրանց մեջ կոմունիստներ ել կային, —վորը բոլորին հավատացնում եր, թե ժամը 13—14 կիլոմետր առևտրական արագությունը հանդիսանում է այն վերջնական սահմանը, վորից ավելի չի կարելի, անցընարկին և շարժվել, յեթե չենք ցանկանում հակասել «շահագործման վերաբերյալ դիտությանը»: Այդ մի բավական հեղինակավոր խմբակ եր, վորն իր հայացք-

Ները քարոզում եր բանալոր և տպագիր կերպով, հրահանդներ եր տալիս ՀՃ՛մկ համապատասխան որդաններին և առհասարակ «մտքերին իշխող» եր հանդիսանում շահագործման մասնադիտների մեջ։ Մենք, վոր դործի գիտակներ չենք, յերկաթուղային դործի մի ամբողջ շարք պրակտիկների առաջարկների հիման վրա մեր հերթին հայտապացնում ենք այդ հեղինակավոր պրոֆեսորներին, վոր 13—14 կիլոմետրը չի կարող վերջին սահմանը լինել, վոր դործի վորոշ կագմակերպմամբ կարելի յե ընդդայնել այդ սահմանը։ Դրան ի պատասխան, այդ խմբակը փոխանակ ականջ դնելու փորձի ու պրակտիկայի ձայնին և վերանայելու եր վերաբերմունքը դեպի այդ դործը, պայքարի մեջ նետվեց յերկաթուղային դործի առաջադեմ տարրերի դեմ և ե'լ ամելի ուժեղացրեց իր սպահանողական հայցքների պրոպագանդան։ Հասկանալի յե, վոր մենք հարկադրված յեղանք մի թեթև հասցնելու այդ հարդելի մարդկանց դնչին ու քաղաքավարի կերպով Հաղորդակցության ձանապարհների Փողկոմատի կենտրոնական ապարատից ձանապարհ դնելու։ (Ծափահարություններ)։ Յել ի՞նչ։ Մենք այժմ ժամը 18—19 կիլոմետր առևտրական արագություն ունենք։ (Ծափահարություններ)։ Յես կարծում եմ, ընկերնե՛ր, վոր ծայրահեղ դեպքում հարկ կինի այս մեթոդին դիմելու մեր ժողովրդական անտեսության այլ բնագավառներում ևս, յեթե, իհարկե, համառող պահպանողականները չդադարեն ստախանովյան շարժումը խանդարելուց և նրա առաջ արգելքներ հարուցելուց։

Յերկրորդ։ Ենդիրը կայանում ե նըանում, վորապես այն տնտեսավարներին, ձարտարապետներին ու տեխնիկներին, վորոնք չեն ցանկանում խանդարել

ստախանովյան շարժմանը, վորոնք համակրում են այդ շարժմանը, բայց դեռ չեն կարողացել վերակառուցվել, դեռևս չեն կարողացել զվաճակորել ստախանովյան շարժումը, ողնենք նրանց վերակառուցվելու և ստախանովյան շարժումը գլխավորելու։ Յես պետք ե ասեմ, ընկերնե՛ր, վոր մենք քիչ այդպիսի տնտեսավարներ, ձարտարապետներ և տեխնիկներ չունենք։ Յել յեթե մենք ողնենք այդ ընկերներին, ապա դրանց թիվը մեկ մոտ անկասկած ե'լ ավելի կլինի։

Յես կարծում եմ, վոր յեթե այս խնդիրները մենք իրադորենք, ստախանովյան շարժումն ամբողջ թափով կծավալարվե, կընդգրկի մեր յերկը բոլոր մարզերն ու շրջանները և նոր նվաճումների հրաշքներ ցույց կտա մեզ։

5. ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Միքանի խոսք ներկա խորհրդակցության մասին, նրա նշանակության մասին։ Լենինն ուսուցանում էր, վոր իսկական բոլշևիկ ղեկավարնեց կարող են լինել միայն այն ղեկավարները, վորոնք կարողանում են վո՛չ միայն սովորեցնել բանվորներին ու գյուղացիներին, այլև սովորել նրանցից։ Բոլշևիներից վոմանց Լենինի այս խոսքերը դուր չեն յեկել։ Բայց պատմությունը ցույց է տալիս, ուր լենինը հարյուր տոկոսով իրավացի դուրս յեկալ նաև այս ասպարեզում։ Իրոք վոր՝ միլիոնավոր աշխատավորներ—բանվորներ ու գյուղացիներ աշխատում, ապրում, պայքարում են։ Ո՞վ կարող է կասկածել, վոր այդ մարդիկ իդուր տեղը չեն ապրում, վոր ապրելով ու պայքարելով, այս մարդեկ հսկայական պրակտիկ փորձ են կուտակում։ Մի՞թե կարելի յե կասկածել, վոր այդ փորձն արհամարհող ղեկավարները չեն կարող իսկական ղեկավարներ համարվել։ Հետևաբար, մենք, կուսակցության և կառավարության ղեկավարներս, պետք է վո՛չ միայն սովորեցնենք բանվորներին, այլև սովորենք նրանցից։ Վոր դուք, ներկա խորհրդակցության անդամներդ, այսուղ, խորհրդակցությանը մեր կառավարության ղեկավարներից վորով բան սովորեցիք, այդ յես չեմ ժխտի։ Բայց չի կարելի ժխտել և այն, վոր մենք, կառավարության ղեկավարներս եւ, չատ բան սովորեցինք ձեզնից, ստախանովականներիցդ, ներկա խորհրդակցության անդամ-

ներիցդ։ Ապա ուրեմն, չնորհակալություն ձեզ, ընկերներ՝, սովորեցնելու համար, մեծ չնորհակալություն։ (Փոքորկալից ծափահարություններ)։

Վերջապես յերկու խոսք այն մասին, թե ինչպես պետք է հավերժացնել այս խորհրդակցությունը։ Մենք այստեղ նախագահության մեջ խորհրդակցեցինք և վորոշեցինք, վոր պետք է վորեւ կերպ նշել իշխանության ղեկավարների այս խորհրդակցությունը ստախանովյան շարժման ղեկավարների հետ։ Յեկանա մենք հանդեցինք այն վորոշման, վոր հարկավոր եւ ձեզանից մի 100—120 մարդու ներկայացնել բարձր պարզեցի։

ԱՅՅՆԵՐ : Ճիշտ է։ (Փոքորկալից ծափահարություններ)։

ՍՏԱԼԻՆ : Յեթե դուք հավանություն եք տալիս, ընկերներ՝, ապա մենք այդ գործը դուրս կրերենք։

(Ստախանովականների խորհրդակցության մասնակիցները փոքորկալից խանդավառ ովացիա յեն անում ընկեր Ստալինին։ Ամբողջ դահլիճը թնդում է ծափահարություններից, հումկու «ուռան» դրդացնում է դահլիճի կամարները։ Կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինին վողջունող անքիվ բացականչություններ են լսվում բոլոր ծայրերից։ Ովացիան վերջանում է «Խնտերնացինալի» հզոր յերգեցողությամբ—խորհրդակցության յերեք հազար մասնակիցները յերգում են պրոլետարական հիմնը)։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Ստախանովյան շարժման նշանակությունը	5
2. Ստախանովյան շարժման արմատները	14
3. Նոր մարդիկ—տեխնիկական նոր նորմաներ	22
4. Մերձավորագույն խնդիրները	28
5. Ցերկու խոսք	32

Թաղգմանությունը խմբագրել է Բ. Ն. Դավթյան
Տերն, խմբագիր Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիդեզյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավիտի լիազոր № Կ-3291, հրատ. № 582

Պատվեր № 103, տիրաժ 10.000

Հանձնված և արտադրության 3/VI 1938 թ.

Սառարարված և տպագրելու 17/VI 1938 թ.

Գինը 25 կ., կազմը 75 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության

հրատարակչության տպարան

Տերեան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0181917

ԳԻՆԸ 55 4.

И. СТАЛИН

Речь на первом всесоюзном
совещании стахановцев

Армгиз—Издательство полит.
литературы
Ереван, 1938